ԲԱԶՄԱՎԷՊ

ՕՐԱԳՐՔ

ԺԵ ՏԱՐԻ, ԹԻՒ 11. 1857 ՅՈՒՆԻՍ 1.

բարոյական

Բանք խմաստասիրականք :

Որդեակ, նախ 'ի լեզուէ քումմէ ըզգուշացիր որպէս յօտար թշնամւոյ զի ոչ գիտես թէ յորում ժամու ածէ 'ի վերայ քո չարիս : — Որդեակ, լեզու անմտի և արբեցողի որպէս նետ 'ի քիմն աղեղան, և զայլ ոք ոչ կարէ հարկանել բայց զգլուխ իւր ծեծէ : — Որդեակ, լաւագոյն է քեզ թշնամութիւն ունել ընդ առն իմաստնոյ, քան թէ սիրելութիւն ունել ընդ առն անմտի և լեզուայնոյ : — Որդեակ, զայր լեզուային և ամբարտաւան մի համարձակեցուցաներ 'ի տուն քո, զի մի և դու 'ի գործոց նորա ամօթոյ լիցիս : — Որդեակ, յորժամ տեսանիցես զընկեր քո վախճանեալ՝ մի զանց առնիցես զնմանէ, այլ երթ և ողբա, և մի զընկերն այլ զանձն քո, զի և նոյն օր պատրաստական է քեզ կարձել և զքեզ 'ի կենաց քոց :

Լաւ է քեզ ընդ զրեհաւորի քան ընդ կնոջ լեզուայնոյ և անզգամի : — Յորժամ ասէ քեզ կին քո թէ խեղդեմ ես զիս 'ի նեղութենէ քումմէ՝ դու անձին քում զգուշացիր զի կամի խեղդել ըզքեզ :

Լայր չարախորհուրդ և նախանձոտ ոչ թէ միայն ատելեաց իւրոց խորհի չար, այլ բնութիւն նորա ամենեցուն հակառակ կայ : Զարաբարոյն և ամբարիշտ յորժամ տեսցէ զխռովութիւն ընկերի իւրոյ, ցնծայ և ուրախ լինի և կարծէ 'ի միտս իւր թէ փառս յաւելեալ յիս : — Որդեակ, մի երբէք ասիցես աղքատին թէ դու չար ինձ ոչ կարես առնել, զի բազում չարիք յանարգ մարդկանէ եկանեն և ոչ 'ի պատուական անայ : Որդեակ, կնոջ լեզուայնոյ և անամօթի մի լինիր մերձակայ, զի ոչ գոյ խաղաղութիւն 'ի նմանէ ոչ անձին և ոչ մերձաւորին :

Որդեակ այր իմաստուն ուրախ փառաւորի յաշխարհիս, հետեւող լինի պատուիրանացն Աստուծոյ, և գովելի է ամենայն որդւոց. զի նման է նա արեգական, զի որքան բարձրանայ՝ առաւելուն ճառագայթք նորա յերկրի յամարայնոյ ժամանակի: — Այր զուարթ և առատամիտ սիրեցեալ է յԱստուծոյ և 'ի մարդկանէ, և յաւելու 'ի կեանս իւր զուարթութեամբն իւրով: — Բազում դէմս գայթակղեցուցանեն զմարդ կինն և գինին: — Յորժամ արբենաս՝ կափո զլեզու քո և մի լինիր շատախօս, վասն զի բնութիւն քո ոչ է 'ի ձեռն քո:

Երկիր մայր է ամենայն տնկոց, և արբեցութիւն ամենայն չարեաց: — Այր աներկիւղ ամբարիշտ և ամբարտաւան թէպէտ զէն և զրեհս ունի, սակայն մերկանդամ է:

Ոչ եթէ իմանալն է իմաստութիւն այլ կատարելն: Զի եթէ իմանաս զիմաստութիւն և ոչ կատարես՝ եղեր անիմաստ: Բանից գիրս կարդալոյ և քննելոյ՝ 'ի վերայ քո որ մի անցուցաներ, զի աճեցուցանէ 'ի քեզ զիմաստութիւն, և 'ի հանճար քո յաւելու:

Ընդ անգէտին ամենեւին մի խօսիր զի մի ծաղր լինիցիս:

Յառաջ դու դատ արա քեզէն 'ի միտս քո, և ապա խօսեաց:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Նայելու է որ տղաք ճշմարտախօսութեան վարժին:

Տղոց վրայ գէշ ախտերէն մէկն է նաև ստախօսութիւնը, ուստի դաստիարակին գլխաւոր պարտքը պիտի ըլլայ ջանալ ուղղել, և հեռացընել ու սոսկացընել աս ախտէն: Միշտ պէտք է իրենց առջին վար զարնէ ստախօսութիւնը, իբր ցած, անարժան և ամըչնալու ախտ մը. և թէ բոլորովին անպատիւ կ'ընէ զմարդ, և կը նուաստացընէ, և ամենէն անարգ մարդկանց կարգը կ'անցընէ, և նաև նոյն իսկ գերիներու վրայ ալ տեսնուելու որ ըլլայ՝ անտանելի բան կ'ըլլայ:

Կեղծաւորութիւնը, խորամանկութիւնը, և պատճառանքով անմեղ ձեւանալը ամէն բանի մէջ, ստախօսութենէ այնչափ չեն տարբերիր, այլ մանաւանդ թէ շատ անգամ անվրէպ ծայրը հոն կ'երթայ: Պէտք է որ տղայ մը գիտնայ թէ վարժապետը քան անգամ իրեն պակասութեանցը կը ներէ, քան թէ գէշ պատճառանքներով պարզաբար ծածկէ միանգամ ճշմարտութիւնը յանցանքը գոյելու համար: Երբոր տղայ մը իր յանցանքը կը խոստովանի առանց խարդախութեան, նայէ որ գովես իր բարեսրտութիւնը, և ներես իրեն յանցանացը, ու անկէ ետքը ալ անոր վրայ ամենեւին խօսք չընես: Բայց նայելու է որ չըլլայ թէ տղաքը միայն պատժուելէ ազատելու համար սովորութիւն ընեն իրենց ըրածը խոստովանելու. վասն զի ան ատեն դաստիարակին մեծարանքը կը պակսի տղայոց առջև, և գրեթէ խաղալիք մը կ'ըլլայ անոնց, վասն զի պարզամիտ և բարեսիրտ տղու տեղ կը դնեն զինքը:

Պէտք է որ տղաք ինչ որ տեսնեն և լսեն իրենց ծնողքէն և վարժապետներէն ճշմարտասիրութեան յորդորուէն, և միանգամայն ատելութիւն մը ունենան ամէն տեսակ կեղծաւորութեան դէմ: Անոր համար ամենեւին պէտք չէ կեղծաւորութիւն բանեցընել զիրենք հանդարտեցընելու և կամ համոզելու համար. և ոչ իսկ խոստանալ և կամ սպառնալ անանկ բան մը որ գիտեն թէ ընելու ամենեւին միտք չունիս: Ասով խորամանկութիւն կը սորվեցընես իրենց, որուն արդէն բնութեամբ հակամիտութիւն կ'ունենան:

Աս վտանգիս առջեւն առնելու համար, սորվեցընելու է տղոց որ ինչ որ ուզեն անկեղծութեամբ զուրցեն. իրենց պէտք է հասկըցընել որ խորամանկութիւնը միշտ գէշ սրտէ առաջ կուգայ, վասն զի խորամանկ ըսուելուն պատճառը ան է որ կ'ուզէ ծածկել այն-